# 728 Գթա՛, ո՛վ բարձրյալ Աստված, գթա՛ մեզ, գթա՛,

1. Գթա՛, ո՛վ բարձրյալ Աստված, գթա՛ մեզ, գթա՛,
Իսրայել ժողովրդին Քո գթա՛,
Քո Երուսաղեմ քաղաքին գթա՛,
Գթա՛ (2):
    Նեղությունից, Տե՛ր, մեզ ազատիր,
    Քո խոսքի համաձայն մեզ ներիր,
    Դու ես մեր փրկության Աստվածը,
      Գթա՛ (3):

2. Գթա՛, ո՛վ Բարձրյալ Աստված, գթա՛ մեզ, գթա՛,
Քրիստոնյա ժողովրդին Քո գթա՛,
Մեր հայ ազգին, Տե՛ր, ողորմիր, գթա՛,
Գթա՛ (2):
    Նեղությունից, Տե՛ր, մեզ ազատիր,
    Քո խոսքի համաձայն մեզ ներիր,
    Դու ես մեր փրկության Աստվածը,
      Գթա՛ (3):

Լսի՛ր մեր անդադար աղոթքները, Տե՛ր,
Ողորմի՛ր մեզ, ո՛վ Տեր, մենք քեզ ենք խնդրում,
Սովորեցրո՛ւ մեզ, ով Տեր, Քո ճամփաները,
Որպեսզի Քո ճշմարտության մեջ քայլենք: